Պարույր Սևակ

Անվերնագիր 10

Ես գիտեի, որ դա չէր կարելի.
Կծեծեր մայրս, եթե իմանար...
Դու, նստած բակի սալաքարերին,
Գուլպա ես գործում եղբորդ համար:
Իսկ եղբայրդ ու ես «տափուկ» ենք խաղում՝
Հոգնած քարտեզից, թիվ ու գծերից:
Եվ ես՝ հաղթողս ցանկացած խաղում,
Ես՝ ճանաչվածս նույնիսկ մեծերից,
Պարտվո՞ւմ եմ այսօր, ես ամեն անգամ
Տանուլ եմ տալիս ու... չեմ ամաչում,
Եղբայրդ էլ, պա՛րզ է, խնդում է քահ-քահ
Եվ ամեն անգամ ինձ կույր է կոչում:
Ես կո՞ւյր... Կո՛ւյր էի մինչև այդ կյանքում
Ու բացվել էին աչքերըս արդեն.
Գարնան գիժ քամին, քեզանից թաքուն,
Քո կուրծքն էր բացում ու փակում իմ դեմ:
Ես գիտեի, որ դա չէր կարելի,
Բայց նայո՛ւմ էի - կո՛ւյր չէի արդեն:
Այդ կյանքն էր բացվում իմ դեմ, սիրելի՛ս,
Եվ արժե՞ր խաղում կույր լինել, պարտվել...

21.V.1946թ. 17.VII.1953թ.

Երևան Չանախչի